թեան օգտակար անձի մը արծաթէ պսակ մը ընծայ ըրեր էր։ Ինոր համար Կորվինոսի սեղանը միշտ անպակաս էին Հռովմայ ազնուականներ և մեծ աստիճանի դատաւորներ։

Ինչ զարմանք որ ունեցեր էր Արվինոս աս նոր կենացս վրայ՝ քիչ ատենէն արհամարհութե փոխուեցաւ։ Ան զի վարժած ըլլալով իր սակաւապետ ազգին սովորութեանցը, և բանի տեղ չսեպելու այն ամէն բան որ մարդուս ուժին և խելքին առաւելութիւն մը չբերեր, իրոխտ արհամարհութեամբ մը ատեց այն անշահ շռայլութիւնները, և սկսաւ նորէն տիրութեամբ իր հայրենեացը վրայ մտածել։

Օրը յիշատակը միշտ աչքին առջևն էր, որուն սերը, իբրև կենաց վերջին յոյս մը միայն քովը մնացեր էր. և կը յուսար որ Հռովմ ասդին անդին փնտրուելով՝ իրեն որուն քովը ըլլալը կարեւնայ իմանալ։

Բայց այս դժուարին բանիս ձեռք զարնելէն առաջ, հարկ էր նախ որ իր միտքը հասկցնելու ճար մը գտնայ։ Լաստի սկսաւ լատիներէն սորվիլ անանկ կարգէ դուրս եռանդեամբ մը որ միայն այնպիսի կրից և տագնապի մէջ եղող մը կրնայ ունենալ։ Դժբաղդաբար Կելտաց անհարթ լեզուին վարժած ըլլալով, չէր կրնար փափուկ կերպով հընչել ու արտասանել լատիներէնը։ Դժուարութեամբ և չուզելով յիշողութեանը մէջ կ'ամբարէր ատելի ազգին բառերը, և կարծես թէ իր հայրենասէր ոգին նաև յաղթականին լեզուն ատելի ընել տուած էր։ Բայց համբերատար և հաստատուն կամքով՝ ամենայն դժուարութեանց յաղթեց, և քանի մը ամիս հազիւ թէ անցաւ չանցաւ Արվինոս սկսաւ ուրիշին ըսածը հասկընալ, պատասխան ևս տալ։

Հազիւ թէ քանի մը բան խօսիլ սկսաւ՝ մէկէն մայրը գտնելու ետևէ եղաւ. բայց շուտով իմացաւ որ միտքը դրածը յաջողցընելու համար, պէտք էր որ ազատութիւն ունենար, և յարմար ժամանակի սպասէր։ Միշտ տիրոջը գործոցը զբաղած էր, և օրուան մէջ հազիւ թէ քանի մը ժամ պարապ ատեն կ'ունենար։ Այսպէս խել մը ամիս անցաւ և ինքը չկրցաւ մօրը վիճակին վրայ բան մը իմանալ։

Յրբոր տղան տրտում և լքեալ՝ կը ջանար հնարք մը գտնելու, որ կարենայ իր նպատակին հասնիլ, յանկարծ նոր դէպք մը պատահելով, բոլոր իր մտքին խորհուրդները փոխեց։

Կը շարունակուի։

Գաղղիա։

(Շարունակութիւն և վերջ։ Տես երես 265)

Երեսուն տարի մը կայ որ Գաղղիա ուսմանց, ճարտարութեան և ձեռակերտից մէջ տարի տարուան վրայ անկարծելի յառաջադիմութեան մը մէջ է, օգտակար գիւտեր, նորահնար մեքենաներ, արուեստից կատարելագործութիւններ վկայ են ըսածներնուս։ Ինպիսի փոյթ մը կայ որ և իցէ գիտութեանց ճիւղերը զարգացընելու, որուն նմանը քիչ ազգի մէջ կը տեսնուի, և յիրս իրս ալ գաղղիացի հանճարը կը գերազանցէ քան զայլս։ Որագրաց և լրագրաց բազմութիւնն ալ կարգէ դուրս եղաւ աս ետքի տարիներս, և այս մասիս մէջ միայն Անգղիա կը հաւասարի ու կ'անցնի ալ քան զինքը. այս օրուան օրս 470 հրատարակմունք կ'ըլլուին միայն Բարիզու մէջ, իսկ դրսերը 642, 'ի բաց թողլով մանր մունր օրական կամ շաբաթական հրատարակմունքները, որոնց թիւը չկայ։ Բարիզու մէջ 91 տպարան կայ մեծ ու պզտիկ, որոնց մէջ նշանաւոր է Տիտոյի տպարանը իր առաջնութեամբն ու գեղեցկատիպ տպագրութիւններովը։ Բարիզէն դուրս բոլոր Գաղղիոյ տպարաններուն թիւն է 949։ Այսկեց կը տեսնենք թէ ինչ աստիճանի ընթերցասիրութիւն կայ, որ մեծ խրախոյս է գիտութեանց յառաջադիմելուն և հանճարոյ զարգացման։

Երկրագործութիւն : — Թէ որ երկրագործութեան ու մշակութեան մասին վրայ աչք մը տանք, կը տեսնենք դարձեալ որ Գաղղիա առաջին տեղն ունի Եւրոպիոյ մէջ. բնութիւնը թէպէտ զլացած է իրենց Յունաստանի, Իտալիոյ ու Սպանիոյ գեղեցիկ երկինքն ու բերրի դաշտերը՝ բայց ասոր պակասութիւնը կը լեցընեն Գաղղիացիք արուեստով և ճարտարարուեստ հնարագիտութիւններով, ինչպէս նաև Անգղիացիք որ Գաղղիացւոցմէ վար չեն մնար : Գաղղիոյ մակերևոյթին իւրաքանչիւր քառակուսի հարիւրամէտրին 54րորդ մասը մշակուած է. Անգղիոյ՝ 55րորդ մասը. Պելճիոյ 48. Տանիմարքայի և Պրուսի 40. Իտալիոյ և Լուսիտանիոյ 30. Գերմանիոյ և Սպանիոյ 27. Հելուետիոյ 25. Հոլանտիոյ և Աւստրիոյ 20. Ռուսաստանի և Լեհաստանի 18. Շուետի և Նորուեկիոյ 14 : Գաղղիոյ ժողովրդեան 20 միլիոնը երկրագործութեան կը պարապի այս հետևեալ բաժանմունքովս :

Կալուածատէրք . . .	7,159,248
Վարձուորք	2,588,311
Ստորին վարձուորք [1] . .	1,412,037
Աւուրչէքով աշխատողք . .	6,122,747
Ծառայք	2,748,263
Փայտահատք . . .	320,986
	20,351,592

Այսչափ կալուածատէրաց և աշխատողաց ունեցածը միահամուռ 47,028,370,000 Ֆր. դրամագլխի կը հասնի. աս գումարիս 41,460,120,000ը երկրին արժէքն է. գեղացոց տուներն և կահկարասիքը 3,325,000,000 Ֆր. արժէք ունին, իսկ իրենց ձեռքին տակը խնամուած կենդանեաց և արջառոց արժէքն է 2,243,250,000 Ֆր. երկրին տարեկան բերքը կը հասնի 9 հազար միլիոն Ֆրանքի, և երթալով աճելու վրայ է. որով եթէ 1700 թուականին հետ բաղդատենք, հիմակուան շահաբերութիւնը շատ աւելի աճած կը տեսնենք, քան ինչ որ էր այն ատենը. ինչպէս օրինակի համար բուրդը որ 1812ին 38 միլիոն հազարակրամ կ'ելլէր, ինչպէս կը վկայէ Շաբդալ, այսօրուան օրս 80 միլիոն հազարակրամէն աւելի է. այս հսկայաքայլ աճումը ուրիշ բերքերու վրայ ալ կը տեսնուի, զորոնք աւելորդ կը սեպենք երկայն բարակ շարելը :

Ձեռարուեստից ճարտարութիւն : — Գաղղիոյ ձեռագործները շատ անուանի են ընդ ամենայն Եւրոպա, յիրս իրս կը գերազանցեն զամէնքը և շատ բանի մէջ ալ կը հաւասարին ուրիշ ազգաց ճարտարութեանը. առաջիններուն կարգէն են ամենազգի զարդեր, ոսկերչութիւն, և պղնձեղէն կազմածներ՝ որոնց մէջ Գաղղիոյ հաւասարող քիչ կայ, և ասոնք Փարիզու սեպհական ձեռագործներն են : Դարձեալ շատ առաջ գնացած է՝ ժամացուցի, խեցեղէն անօթներու, բամբակեղէն հիւսուածներու, գունաւոր թղթոց, զինարարութեան և բժշկական գործեաց արուեստները. իսկ կերպասեղինաց, Սեվրայ անօթներու և Կոպըլէնի օթոցներու հաւասարող չէ եղած : Թղթի գործարանները, որոնք գլխաւորաբար Անկուլէմ, Աննոնէյ և Ռիւերման են, տարին 40 միլիոն Ֆր. շահ կը բերեն : Ասոնցմէ դուրս նշանաւոր են Փարիզու աստղաբաշխական, բնագիտական և վիրաբուժութեան գործիքներն ու տպագրութիւնները և այլն : 80,000 հոգի միակերպ մետաքսեղէն կերպասներու վրայ կ'աշխատին՝ որն որ տարին 250,000,000 Ֆր. աւելի շահ կը բերէ, ասոր մէջ անուանի են Լիոն, Աւինիոն, Նիմ և Դուր քաղաքները : Երկաթի գործուածքներն ալ նմանապէս շատ կատարելագործուած են և տարին 6 միլիոն մէդրական կենդինար թափցու երկաթ միայն կը հանեն որ 100 միլիոն Ֆրանքէն աւելի կ'արժէ. 800 գործարան կայ այս մետաղիս սահմանեալ և 40,000 գործաւորք : — Ինչպէս ծովու վրայ Անգղիացիք, այսպէս ալ ցամաքային վաճառականութիւնը Գաղղիացիք գըրաւած են, այս առաւելութեամբ որ Գաղղիոյ վաճառքները ընդհանրապէս

[1] Գղ. Métayers.

ձեռագործք և Ճարտարութիւնք են։ Գրսէն Գաղղիա մտած վաճառքներն են երիվար, գրաստ, անգործ մետաքս, ասր, ներկի փայտ, կապար, անագ, պղինձ, ոսկի, արծաթ, տեսակ տեսակ ըմպելիքներ և ձուկն. իսկ Գաղղիայէն կը խաւրուին գինի, ցքի, չուխայ, ասղնեգործ և մետաքսեղէն կերպասներ, կտաւ, թուղթ, գիրք, կահք, Ճարտարաշէն զարդեր, ժամացոյց, յախճապակի, գլխարկ, բիւրեղ, դանակ, ամենազգի գործիքներ, համեղ ու աղնիւ ըմպելիքներ և այլն, և այլն։ Բրդ Գաղղիոյ տարեկան բերքերէն եկածը 5,000,000,000 ֆրանքէն աւելի է ինչպէս վերը ըսինք. ներքին տուրևառը 7,096,000,000 ֆր. իսկ Գաղղիայէն դուրս խաւրուած ապրանքներուն գինը 4,000,000,000 ֆրանքէն աւելի է։ — Գաղղիոյ ներքին գործօնէութիւնը ցուցընելու համար կը դնենք հոս քանի մը ձեռակերտաց գործարաններուն թիւը, ուսկից կրնան մակաբերուիլ մեկալնոնք ալ։ Պարզ մետաղի գործարանները 38,000ին աւելի են. խաղախորդներու գործարանները 180,000,000 ֆրանքի ապրանք ամէն տարի վաճառքի կը հանեն. ապակւոյ կամ բիւրեղի 230 գլխաւոր գործարան կայ, որոնց մէջ անընդհատ 10,000 հոգի կ'աշխատին. և այլն։ Գաղղիա 16,000 վաճառականի նաւ ունի մեծ ու պզտիկ, որոնց 300ը շոգեվար են. 400 վաճառաշահ նաւահանգիստ ունի, որոնց գլխաւորներն են, Մարսիլիա, Պորտոյ, Պայոն, Հաւր, Լանթ, Այն-Մալո, Գալէ, Պուլոնը, Ռոշէլ, Շէրպուրկ և այն։ — Հոս Գաղղիոյ օտար տէրութեանց հետ ունեցած վաճառականութիւն ցուցակը կը դնենք, ուսկից աւելի որոշ գաղափար մը կրնայ առնլցուիլ։

	Մտնող վաճառք	Ելնող վաճառք
Անգլիա . .	150 միլիոն	356 միլիոն
Միացեալ Նահանգք .	166 .	275 .
Պելճիա .	166 .	141 .
Բիէմոնթ .	106 .	74 .
Սպանիա .	65 .	66 .
Գերմ. Դաշնակցութիւն	76 .	55 .
Հելուետիա .	43 .	58 .
Ռուսաստան .	67 .	16 .
Տաճկաստան .	58 .	28 .
Պրէզիլ . .	18 .	34 .

Բայց այս հաշիւս որ 1856 տարւոյն համեմատ եղած է հիմա երրորդ մասմբ մը աւելի ոչնած է։

Ոսկի արտոնի։ — Տէրութեան մը վաճառականութեան ծաղկելուն գլխաւոր նպաստներէն մէկն ալ է Ճանապարհաց բազմութիւնը, և այլ և այլ քաղաքաց, դիւրացուցիչ ուղիներով, իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնը. և այս մասիս մէջ դարձեալ Գաղղիա զարմանալի է. նաւարկելի Ճամբաները ոչինչ պակաս են թուով քան ցամաքայինները, որով բոլորին երկայնութիւնը մէկտեղ առած 730,000 հազարամէջը կ'անցնի. ցամաքայիններուն կարգէն են երկաթուղիներն և բուն արքունական Ճամբայները. իսկ ջրայիններուն կարգէն են ափունք և ջրանցք. ցամաքայինները դարձեալ երկուք կը բաժնուին, սոսկ արքունական և հասարակ ուղիք. արքունականները որ 214 են՝ ու 36,038 հազարամէջը երկայնութիւն ունին, առանձինն տէրութեան ստացուածք մը կը սեպուին և իրեն ծախքովը կը շինուին. իսկ հասարակ Ճանապարհաց շինութիւնն և պահպանութիւնը իրաքանչիւր գաւառաց վրայ է։ 1857ին բոլոր շոգեվար ընթացից երկայնութիւնն էր 18,145 հազարամէջը. 'ի բաց հանեալ զանոնք որք դեռ շինութեան վրայ էին։

Գաղղիական-Իտալական կամ Կալուածք Գաղղիացւոյ։ — Գաղղիացւոց օտար աշխարհքներ ունեցած կալուածքները ատենօք շատ աւելի էին քան թէ հիմա, զորոնք գրեթէ կիսով չափ կորսընցուցած են այլ և այլ պատերազմաց և դաշանց զօրութեամբը։ Բրդի ունեցած կալուածներնուն մէջ առաջինն է Բրիկէի մէջ Բլէրի, Անենկալիա, Սուրբ Լուդովիկոս ու անոր մերձակայ կղզիները, Լամբսարի կայարանները, Պաքէլ և Փոտոր նաւահանգիստները. ասոնց կարգէն էր Մատակասկար կղզին, զոր հիմա թողուցած են։ Անդիլեան

	Մտնող վաճառք	Ելնող վաճառք
Անգլիա . .	150 միլիոն	356 միլիոն
Միացեալ Նահանգք .	166 .	275 .
Պելճիա .	166 .	141 .
Բիէմոնթ .	106 .	74 .
Սպանիա .	65 .	66 .
Գերմ. Դաշնակցութիւն	76 .	55 .
Հելուետիա .	43 .	58 .
Ռուսաստան .	67 .	16 .
Տաճկաստան .	58 .	28 .
Պրէզիլ . .	18 .	34 .

Բայց այս հաշիւս որ 1856 տարւոյն համեմատ եղած է հիմա երրորդ մասմբ մը աւելի ոչնած է։

Ոսկի արտոնի։ — Տէրութեան մը վաճառականութեան ծաղկելուն գլխաւոր նպաստներէն մէկն ալ է Ճանապարհաց բազմութիւնը, և այլ և այլ քաղաքաց, դիւրացուցիչ ուղիներով, իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնը. և այս մասիս մէջ դարձեալ Գաղղիա զարմանալի է. նաւարկելի Ճամբաները ոչինչ պակաս են թուով քան ցամաքայինները, որով բոլորին երկայնութիւնը մէկտեղ առած 730,000 հազարամէջը կ'անցնի. ցամաքայիններուն կարգէն են երկաթուղիներն և բուն արքունական Ճամբայները. իսկ ջրայիններուն կարգէն են ափունք և ջրանցք. ցամաքայինները դարձեալ երկուք կը բաժնուին, սոսկ արքունական և հասարակ ուղիք. արքունականները որ 214 են՝ ու 36,038 հազարամէջը երկայնութիւն ունին, առանձինն տէրութեան ստացուածք մը կը սեպուին և իրեն ծախքովը կը շինուին. իսկ հասարակ Ճանապարհաց շինութիւնն և պահպանութիւնը իրաքանչիւր գաւառաց վրայ է։ 1857ին բոլոր շոգեվար ընթացից երկայնութիւնն էր 18,145 հազարամէջը. 'ի բաց հանեալ զանոնք որք դեռ շինութեան վրայ էին։

Գաղղիական-Իտալական կամ Կալուածք Գաղղիացւոյ։ — Գաղղիացւոց օտար աշխարհքներ ունեցած կալուածքները ատենօք շատ աւելի էին քան թէ հիմա, զորոնք գրեթէ կիսով չափ կորսընցուցած են այլ և այլ պատերազմաց և դաշանց զօրութեամբը։ Բրդի ունեցած կալուածներնուն մէջ առաջինն է Բրիկէի մէջ Բլէրի, Անենկալիա, Սուրբ Լուդովիկոս ու անոր մերձակայ կղզիները, Լամբսարի կայարանները, Պաքէլ և Փոտոր նաւահանգիստները. ասոնց կարգէն էր Մատակասկար կղզին, զոր հիմա թողուցած են։ Անդիլեան

կղզեաց մէջէն Մարգինիկէ և Կուատալուբա կղզիները, Մարի-Կալանդ և Սրբոց կղզիները, Ս. Մարտինոս կղզւոյն արևելեան մասը և Տեզիրատ, Ս. Պետրոս կղզին և Միգըլոն՝ Նոր երկրին մօտերը, և Կիւյանայի մէկ մասը: Ովկիանիոյ մէջ Մարգիզեան և ուրիշ փոքր կղզիներ: Նոնց բոլորին տարածութիւնն է 5,700 քառակուսի մղոն և 4,000,000 բնակիչք, որոնց մեծ մասը յԱփրիկէ են:

Քանի մը հետաքննական տեսութիւններ այս տարուան օդերուն խառնակութեան պատճառացը վրայ:

Միշտ, բայց մասնաւորապէս աս դարուս մէջ շատ գիտնոց մտադիր պարապմանը նիւթ եղած է օդաբանութեան ուսումը. բայց պէտք է խոստովանինք որ այս կարևոր ուսումը դեռ իր մանկութեան հասակին մէջն է, և խիստ քիչ բան գիտենք այս նիւթիս նկատմամբ: Ոչ ոք յաստեղագիտաց ինչուան հիմա կրցեր է անսխալ կերպով գուշակել օդային փոփոխութիւնները. և երբոր մտածելու ըլլանք թէ ինչպէս բնութիւնը յամենայնի պարզ է և անփոփոխ օրէնքներու վրայ հաստատուած, հարկ կ'ըլլայ որ մենք մեզի հարցընենք թէ ինչո՞ւ չենք կրնար մեկնել օդին անկանոնութիւնները, մինչդեռ որ և իցէ գործիքի մը այլայլութիններուն պատճառը շուտ մը կ'իմանանք ու կը մեկնենք:

Մեզի այնպէս կը տեսնուի որ այս տարուանս ամառնային երեք ամիսներուն սաստիկ անձրևային ըլլալը և օդաչափ գործւոյն բնաւ չբարձրանալը, առանց պատճառի չկրնար ըլլալ. ուստի հոս կ'ուզենք քննել թէ ինչ հաւանական պատճառ մը կրնայ ըլլալ այս խառնակութեանս:

Ամէն մարդ գիտէ այսօրուան օրս որ երկիրս իր առանցքին վրայ կը դառնայ քսանըչորս ժամուան մէջ, և թէ այս օրական շարժմանէն դուրս՝ ունի ուրիշ մեծագոյն շրջան մը արևուն վրայ, որ 365 օրուան ու գրեթէ վեց ժամուան մէջ կը կատարէ: Արդ այս կրկնակի շարժմանէն առաջ կու գայ որ երկիրս ու արևը միշտ նոյն դիրքի մէջ չգտնուելով և ոչ ալ մակերևոյթնին նոյն հանդիպմունքը ունենալով՝ հարկաւ փոփոխութիւն մը պէտք է տեսնուի երկրիս վրայ, որուն սակաւք ուշ կը դնեն. բայց մենք այս փոփոխութեանցս մէջ պէտք է փնտռենք օդերուն խառնակութեանց պատճառը: Վասն զի հաւաստեաւ գիտենք որ երկիրս իր տարևորական շրջանին ընթացիցը մէջ միշտ կը փոխուի, և այս է ծփական շարժման ըսուածը:

Այս ծփական շարժումը այնպիսի կերպով մը կը կատարուի որ երկիրս փոփոխակի երբեմն արևուն կը մօտենայ, երբեմն անկէ կը հեռանայ, և ասով երկիրս եթէ արևուն մերձակէտ ըլլայ, եթէ հեռակէտ՝ անկարելի բան է որ երկրիս ու արևուն հասարակածները ճշդիւ իրարու համապատասխանեն՝ ոչ տարիներուն շրջանին, ոչ ամիսներուն, ևս առաւել օրերուն ու ժամերուն մէջ. ասկէ կը հետևի որ եղանակները, իրենց տևելը, բարեխառնութիւննին և այն ամէն բան որ մեր երկրագնտին օդաբանութեանը կը վերաբերին, անընդհատ փոփոխութեան մը մէջ ըլլան և տեսակ տեսակ երևոյթներու պատճառ:

Ըսածնիս լաւ հասկընալու համար պէտք է գիտնալ Ա. որ արևն ու երկիրս իրենց թաւալումը ոչ երբեք նոյնչափ ատենուան մէջ կ'ընեն. վասն զի երկիրս իր թաւալումը 24 ժամուան մէջ կ'ընէ, իսկ արևը մօտ 25 օրուան մէջ: Բ. Արևուն շրջանակը 969,000 լևքա է, մինչդեռ երկրինը 9000 լևքա է միայն հասարակածին տակ. ասկէ կը հետևի որ արևուն հասարակածին ամէն մէկ կէտը 38,700 լևքա տեղ կ'ընթանայ 24 ժամուան մէջ, մինչդեռ երկիրս 9000 լևքա, որ չորս անգամ նուազ երագ ըսել է:

Երկուքին թաւալման այս ամենամեծ զանազանութեանը վրայ, աւելցը-